Էդիկ Մինասյան (ՀՀ), պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան

ՌԴ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ԴԵՐԸ ՀՀ-ՌԴ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՌԴ հայկական Սփյուռքը նշանակալի դերակատարություն ունի հայ-ռուսական հարաբերություններում: Ռուսաստանի Դաշնության տարածքում հայկական Սփյուռքի հիմնադրման, ձևավորման փուլը սկսվեց հենց խորհրդային իշխանության առաջին տարիներին՝ պայմանավորված պատմական հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում, հայության ցեղասպանությամբ և տեղահանումներով: Այստեղ ստվարանում և առաջանում են նոր հայկական համայնքներ, ընդլայնվում է հայկական Սփյուռքի աշխարհագրությունը: Ռուսաստանում քաղաքական անկախության պայմաններում տեղի հայկական մի շարք համայնքներում՝ Դոնի Ռոստովում, Ղրիմում, Հյուսիսային Կովկասում ստեղծվեցին և զգալի դերակատարություն ստանձնեցին հայկական համայնքային կազմակերպությունները, հասարակական-բարեգործական և մշակութային-լուսավորական հիմնարկները: Հարկ է ընդգծել այն իրողությունը, որ այդ համայնքները (հայկական Սփյուռքը) միասնական պատմական կենսագրություն են կերտել նախ Ռուսական Կայսրության, ապա նաև խորհրդային պետության կազմում՝ շուրջ երկու դար գտնվելով նույն մշակութային, հասարակական և սոցիալ-քաղաքական միջավայրում: Առանձնահատուկ կողմերով հանդերձ՝ պատմական ընդհանրությունը կիրառական է նաև հետխորհրդային տարածաշրջանի նորանկախ հանրապետությունների հայ համայնքները բնորոշելու համար: Որպեսզի ավելի հասկանալի լինի ՌԴ հայկական համայնքի դերակատարումը ներկա ՌԴ-ՀՀ հարաբերությունների զարգացման գործում, անհրաժեշտ է համառոտ պատմական անդրադարձ կատարել այդ հարաբերությունների ձևավորման ընթացքին: Հայտնի է, որ Ռուսաստանի տարածքում հայերի բնակության մասին վկայություններ կան դեռևս Կիևյան Ռուսիայի կազմավորման շրջանից սկսած (11-12-րդ դդ.)[537]: Այստեղ հայերի հետագա ստվարացումը և հայկական բնակավայրերի և համայնքների հիմնադրումը հիմնականում պայմանավորված են եղել պատմական տարբեր ժամանակաշրջաններում Հայաստանի դեմ արշավանքներով և հայերի տեղահանություններով (13-14-րդ, 19-20-

[537] «Հայ գաղթաշխարհի պատմություն» (միջնադարից մինչև 1920 թ.) եռահատորյակ, հատոր առաջին, խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Վ. Միքայելյան, Ե., 2003, էջ 41-44:

րդ դդ.), ինչպես նաև Ռուսաստանի աշխարհաքաղաքական դերի աճով և հայ վաճառականության շերտի ձևավորմամբ ու զարգացմամբ (սկսած 17-րդ դդ.): Հայկական համայնքներ հիմնվել են Մոսկվայում (14-րդ դ.), Նովգորոդում, Կազանում (18-րդ դ.), Աստրախանում, Ղզլարում (18-րդ դ.), Մոզդոկում, Ռուսաստանի նախկին մայրաքաղաք Սանկտ-Պետերբուրգում, Կուբանի մարզում (19-րդ դ.) և այլուր: 1778 թ. Ղրիմի խանության գրավումից հետո տեղի հայ բնակչությունը վերաբնակեցվել է Դոնի գետաբերանի տարածքում (1779 թ.), ուր և հիմվել են այժմյան Դոնի Ռոստովի մաս կազմող Նոր Նախիջևան քաղաքը և շրջակա հինգ հայկական գյուղերը[538]: Այդ ժամանակաշրջանում հայ-ռուսական հարաբերությունները հիմնականում կրել են առևտրական և մշակութային բնույթ: Հայերն առաջին օտարերկրացիներն են եղել, որոնք ստացել են Ռուսաստանով տարանցիկ առևտուր անելու արտոնություն: Այսպես՝ դեռևս 1667 թ. ցար Ալեքսեյ Միխայլովիչը առևտրային պայմանագիր է կնքել Իրանի Նոր Ձուղայի (Սպահան) հայ վաճառականների ընկերության հետ, որով վերջիններիս տրվում էին Իրանի և Ռուսաստանի միջև, ինչպես նաև Ռուսաստանի տարածքով Արևմուտքի և Արևելքի երկրների հետ մետաքսի առևտրի աննախադեպ արտոնություններ և իրավունքներ:

Հետագայում ևս հայերը, Ռուսական կայսրության տնտեսական կյանքում նշանակալի դերակատարներ համարվելով, արտոնություններ են ստացել Պետրոս Ա-ի, Եկատերինա Բ-ի և Պավել Ա-ի օրոք: Հայ համայնքներին Ռուսաստանի իշխանությունները շնորհել են ոչ միայն տնտեսական, այլև իրավական արտոնություններ: 18-րդ դարից սկսած՝ Աստրախան, Ղզլար, Մոզդոկ համայնքները ստացել են ինքնավարություն, որն իրականացվել է հայկական դատարանի կամ մագիստրատի միջոցով: Ինքնավարության այդ մարմինները գոյություն են ունեցել մինչև 1840-ական թթ., իսկ ռուսահայ շատ համայնքների ներքին կյանքը կարգավորվել է 1760-ականներից կազմված Աստրախանի հայոց դատաստանագրքով[539]:

Ռուսաստանում հայկական համայնքների կազմավորումը շարունակվել է նաև 19-րդ դարի ընթացքում: Մասնավորապես, 19-րդ դարի առաջին կեսին հիմնվել է Արմավիր քաղաքը Հյուսիսային Կովկասում, հայերը հաստատվել են նաև այլ քաղաքներում[540]: Իսկ 19-րդ դարի երկրորդ կեսին Արևմտյան Հայաստանում հայերի վիճակի կտրուկ վատթարացմամբ և 1894-1896 թթ. կոտորածներով պայմա-

---

[538] Տե՛ս «Հետխորհրդային երկրների հայկական համայնքների ինքնության խնդիրները և տեղեկատվական ռեսուրսները», Ե., 2010, էջ 157:

[539] Տե՛ս «Հետխորհրդային երկրների հայկական համայնքների ինքնության խնդիրները և տեղեկատվական ռեսուրսները», Ե., 2010, էջ 158:

[540] Տե՛ս «Հայ գաղթօջախների պատմություն», հ. 1, էջ 445:

նավորված՝ բազմաթիվ արևմտահայ փախստականներ հաստատվել են Սև ծովի կովկասյան ափի քաղաքներում: Արևմտահայ փախստականների հաջորդ ալիքը Ռուսաստանի հարավում ապաստան էր գտել 20-րդ դարի ցեղասպանության հետևանքով: Հայ առաքելական եկեղեցին՝ ի դեմս Աստրախանի թեմի, այստեղ հիմնվել է 1717 թ.՝ միավորելով տարբեր հայաշատ բնակավայրերի հայությանը: 18-րդ դարի վերջից հիմնվել են նաև կրթօջախներ բազմաթիվ քաղաքներում, որոնցից առավել հայտնի են Նոր Նախիջևանի Սբ. Խաչ վանքի դպրոցը, Աստրախանի Աղաբաբյան դպրոցը, Մոսկվայի Լազարյան Ճեմարանը: Առաջին հայկական տպարանը Ռուսաստանում հիմնադրվել է 1780-ական թթ. Սանկտ-Պետերբուրգում[541]: Այդ ժամանակաշրջանից մինչև 1920-ականները ընդհանուր առմամբ գործել է 24 հայկական տպարան: Առաջին հայ պարբերականը՝ «Արևելյան ծանուցմունք» շաբաթաթերթը, լույս է տեսել 1816 թ.[542]: Տարբեր տարիներին հայերեն թերթեր ու ամսագրեր հրատարակվել են Մոսկվայում (ավելի քան 20 անուն), Նոր Նախիջևանում (20 անուն), Սանկտ-Պետերբուրգում (5 անուն), Պյատիգորսկում (6 անուն) և այլն[543]:

Փաստորեն, ՌԴ հայ համայնքների գործունեությունը կարելի է դիտարկել նախ՝ Խորհրդային Ռուսաստանի կազմում հայ գաղթօջախների գոյության և զարգացման միտումներով և, ապա՝ անկախության պայմաններում սփյուռքահայ համայնքի ստվարացմամբ: Նոր արտագաղթի պայմաններում ամրապնդվում է հայ-ռուսական դարավոր բարեկամությունը՝ սկսած 16-18-րդ դդ. մինչև մեր օրերը:

Քաղաքացիական պատերազմի տարիներին ռուսահայ այն կենտրոններում, որոնք դուրս էին Խորհրդային իշխանության վերահսկողությունից, հայկական համայնքային կառույցների օժանդակությամբ գործելիս (բարեգործական-գաղթականախնամ մարմիններ, հայկական դպրոցներ, մամուլի միջոցներ) կապեր են հաստատվել Հայաստանի և մասնավորապես՝ Ռուսաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչների հետ: Խորհրդային իշխանությունն ամեն կերպ խոչընդոտել է Ռուսաստանում ազգային կազմակերպությունների գոյությանը, կոշտ վերաբերմունք է ցուցաբերել կրոնի, եկեղեցու և մամուլի նկատմամբ, փակել է ազգային հաստատությունները: Այդպիսի պայմաններում, երբ ազգային հիմնարկները որակվում էին բուրժուական, ազգայնական-հակախորհրդային և ենթակա էին լուծարման, խորհրդային իշխանությունն ազգային խմբերի մեջ տարվող աշխատանքներն իրականացնում էր Ազգությունների ժողկոմիսարի-

[541] Նույն տեղում, էջ 336, 337:
[542] Նույն տեղում, էջ 280:
[543] Նույն տեղում, էջ 322, 345, 443:

ատի ազգային բաժանմունքների միջոցով[544]: Ռուսաստանում խորհրդային իշխանության հաղթանակը ազդարարեց ոչ միայն հայկական, այլ նաև ազգային բոլոր հաստատությունների լուծարման մասին: Մինչ այդ հայկական տեղական կառույցներն ամբողջովին տնօրինում էին համայնքային կյանքը, որը կարճատև, սակայն որոշ աշխուժություն, թարմ լիցքեր հաղորդեց գաղութահայ կյանքին: Խորհրդային իշխանությունների ազգային քաղաքականությունը բացասական հետևանքներ ունեցավ խորհրդային սահմաններից դուրս ապրող հայության համար, անտեսվեցին խորհրդային հանրապետություններում ապրող ազգային փոքրամասնությունների իրավունքները: ԽՍՀՄ տարածքում և նրա սահմաններից դուրս ապրող հայերի մասին խոսելիս երբեք չէր կիրառվում գաղթօջախ կամ սփյուռք անվանումը: Գաղափարախոսական միտվածություն ունեցող այս մոտեցումը հիմնավորվում էր նրանով, որ հայերը (այդ թվում ՀՍԽՀ-ում բնակվող՝ որպես Խորհրդային Միության լիիրավ քաղաքացիներ, «պատմական նոր հանրություն», խորհրդային ժողովրդի բաղկացուցիչ մասն են: Խորհրդային շրջանում Ռուսաստանի տարածքում հայերը հիմնականում հաստատվել են Ալթայի երկրամաս աքսորվելու հետևանքով կամ էլ մասնագիտության բերումով: Այս ընթացքում Ռուսաստանի հայերի ազգային կյանքի դրսևորման միակ ձևը ապրիլի 24-ի Ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված արարողություններն էին: Ցանկացած այլ փորձ (օրինակ՝ հայերի ուսուցման խմբերի ձևավորման) շատ արագ հագչում էր՝ բախվելով իշխանությունների ցավագին արձագանքին: Մինչև 1987 թ. կեսերը գորբոչովյան վերակառուցումը խորհրդային քաղաքացիներին ազգային միավորումներ և համայնքային կառույցներ ձևավորելու հնարավորություն ընձեռված չէր:

Նորագույն ժամանակներում՝ 1988 թվից, մոսկովյան հայությունը սկսեց ակտիվ ու կազմակերպած մասնակցություն ցուցաբերել ՀԽՍՀ-ի և ԼՂԻՄ շուրջ ընթացող քաղաքական կյանքին: 1991 թ. ամրապնդվեց մոսկովյան հայկական համայնքը: Նույն ժամանակաշրջանում դեռևս 1988-1990 թթ. դեպի Ռուսաստան հայերի մեծ հոսք տեղի ունեցավ Ադրբեջանից՝ Սումգայիթում, Կիրովաբադում, Բաքվում կազմակերպած ջարդերի և այլ հայաշատ բնակավայրերից հայերի բռնի տեղահանման հետևանքով: Այս նոր ալիքը համալրվեց նաև 1990-ականներին Վրաստանից և Հայաստանից տնտեսական վիճակի վատթարացման պատճառով արտագաղթած հայերով:

Այժմ էլ ՌԴ-ն Հայաստանի աշխատանքային միգրանտների թիվ մեկ երկիրն է, որը նրանցից շատերի համար ժամանակի ընթացքում

---

[544] Ալեքսանյան Հ., Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917-1941 թթ., Ե., 2011, էջ 5:

աշխատանքայինից վերածվում է մշտական բնակության վայրի: ՌԴ-ում տարբեր հաշվարկներով 1 մլն-ից մինչև 2,5-3 մլն հայ է բնակվում: Հայերը ՌԴ ազգությունների շարքում պաշտոնական տվյալներում զբաղեցնում են 5-րդ, իսկ ոչ պաշտոնական տվյալներով՝ 4-րդ տեղը (ռուսներից, թաթարներից և ուկրաինացիներից հետո)[545]: Հարյուր հազարավոր հայեր սփռված են Ռուսաստանի տարբեր հատվածներում, սակայն առավել կենտրոնացված են մայրաքաղաք Մոսկվայում (շուրջ 500 հազար), Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերում (800 հազար և 400 հազար) և Ռոստովի մարզում (135 հազար)[546]: Հայերը Ռուսաստանում աչքի են ընկնում բոլոր ոլորտներում՝ ակտիվորեն դրսևորելով տնտեսական, ռազմաքաղաքական, պետական կառավարման և սոցիալ-մշակութային ոլորտներում: Ռուսաստանում հայերի շարքերում են ակադեմիկոսներ, պրոֆեսորներ, դոկտորներ, հայտնի բժիշկներ, դերասաններ, նկարիչներ, մարզիկներ, քաղաքագետներ, պետպաշտոնյաներ, ռազմական գործիչներ, որոնք նպաստել և շարունակում են նպաստել ռուսական պետության բարգավաճմանը:

Հայ-ռուսական կապերի ամրապնդման գործում մեծ դերակատարում ունեն Ռուսաստանի Դաշնության հայկական համայնքներում գործող հայկական կազմակերպությունները: Հետխորհրդային տարածքում սփռված հայկական կազմակերպությունների շարքում ռուսաստանյան կառույցները գլխավոր նշանակություն ունեն, քանի որ առաջին հերթին ներկայացնում են միլիոնավոր հայերի: Բացի այդ, հայկական Սփյուռքը ՌԴ-ում մեծ մտավոր և տեղական ներուժ ունի, որի կազմակերպությունը և ի նպաստ հայության ուղղորդումը կարևոր առաջնահերթություն է: Այժմ հայկական կազմակերպված կառույցներ գործում են ՌԴ բազմաթիվ հայաշատ բնակավայրերում: Ներկայումս ՌԴ-ում գործող հայկական կառույցների բազմազան ցանց կա. Ռուսաստանի հայերի միություն (ՌՀՄ), որը ձևավորվել է 2000 թ. ռուսահայությունը ներկայացնող միասնական կազմակերպություն ստեղծելու նպատակով[547]: Այն ընդգրկում է արդեն կայացած տարբեր հայկական կազմակերպություններ ՌԴ տարբեր անկյուններից և շարունակում է ընդարձակվել նոր ձևավորվող մարմիններով: ՌՀՄ գլխամասային կառույցը և դրա մոսկովյան մասնաճյուղը ղեկավարում է հիմնադիր նախագահ Արա Աբրահամյանը: ՌՀՄ-ն միավորում է 64 մասնաճյուղ ՌԴ հանրապետությունում, երկրամասերում և շրջաններում: Միայն Կրասնոդարի երկրամասում գործում են ՌՀՄ 40-ից

---

[545] Մալխասյան Մ., «Հայերն աշխարհում», Ե., 2007, էջ 99:

[546] Նույն տեղում, էջ 27:

[547] Տե՛ս «Հետխորհրդային երկրների հայկական համայնքների ինքնության խնդիրները և տեղեկատվական ռեսուրսները», Ե., 2010, էջ 161:

ավելի տեղական մարմիններ[548]: ՌՀՄ և նրա բոլոր մասնաճյուղերի գործունեության հիմնական ուղղություններն են միջհամայնքային կապերի զարգացումը, հայկական եկեղեցիների նորոգումը կամ կառուցումը, խաչքարերի տեղադրումը, կիրակնօրյա դպրոցների և մշակութային կենտրոնների բացումը, պատմական օրերի և ազգային տոների, հիշատակի օրերի նշումը, մշակութային արժեքների և ազգային ավանդույթների պահպանումը: ՌՀՄ մոսկովյան մասնաճյուղին կից գործում են նաև Ռուսաստանի հայերի միության երիտասարդների ասոցիացիան, կիրակնօրյա դպրոց, մշակութային կենտրոն, կինոյի և սպորտի ակումբներ և այլն: ՌՀՄ մոսկովյան մասնաճյուղը իր հերթին ասոցիացիաներ է հիմնել նաև Հայաստանում («Լոռի-Վանաձոր» և «Շիրակ-Գյումրի»)[549]: Բացի ՌՀՄ կազմում ընդգրկված կամ առանձին գործող հայկական կազմակերպություններից՝ ՌԴ-ում առկա են նաև հայկական ուսումնական միություններ, (օրինակ՝ Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի հայկական ընկերությունը), որոնց գործունեությունը հիմնականում մշակութային-լուսավորական բնույթ ունի և ուղղված է հայկական ինքնության պահպանմանը, համայնքային կյանքի կազմակերպմանը, տեղի հայության ինքնադրսևորմանը, հայ-ռուսական կապերի ամրապնդմանը: 2010 թ. փետրվարին ստեղծվեց Մոսկվայի հայկական կազմակերպությունների ֆորումը, որի նպատակն էր միավորել Մոսկվայում գործող հայկական կազմակերպությունները, համակարգել նրանց գործունեությունը[550]: Ֆորումի առաջին նիստը տեղի ունեցավ փետրվարի 27-ին: Ֆորումն ընտրեց խորհուրդ, որի անդամներն են «Ռուս-հայկական համագործակցություն» կազմակերպության նախագահ Յուրի Նավոյանը, «Ноев Ковчег» թերթի գլխավոր խմբագիր Գրիգոր Անիսոնյանը, «Արևմտահայ հայրենասիրական միություն» կազմակերպության ներկայացուցիչ Իգոր Զարգարյանը, «Արցախի ընկերներ» ակումբի նախագահ Էդուարդ Ղուլյանը, «Հայ մշակույթի զարգացման հիմնադրամի» նախագահ Մեցո Իգիթյանը, «Արարատ» միության նախագահ Մանվել Դոլբակյանը[551]: ՌԴ-ում գործում են նաև հայկական մշակութային բազմաթիվ օջախներ, ինչպիսիք են, օրինակ՝ Մոսկվայի հայկական թատրոնը, որը հիմնադրվել է ՌԴ-ում ՀՀ դեսպանության կողմից: Այն իր բազմազան խաղացանկերով հաջողությամբ հանդես է գալիս ոչ միայն հայկական և ռուսական, այլև երրորդ երկրների բեմերում: ՌԴ-ում բազմաթիվ են նաև հայերենի, հայոց պատմության և հայ մշակույթի ուսուցման կի-

[548] Նույն տեղում:
[549] Տե՛ս նույն տեղում:
[550] Տե՛ս նույն տեղում, էջ 162:
[551] Նույն տեղում:

ռակնօրյա դպրոցները: Դրանց շարքում է նաև ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից կիրակնօրյա դպրոցը Մոսկվայում: Հայկական մշակութային դաստիարակության թեքում ունի Մոսկվայի № 1110 միջնակարգ դպրոցը (տնօրեն՝ Սեդա Գալոյան): Հայոց լեզու, պատմություն և մշակույթ են ուսուցանում նաև Հայ Առաքելական եկեղեցու «Հայորդաց տունը» Մոսկվայում և ՌԴ մյուս քաղաքներում գործող եկեղեցիներում:

Հայ Առաքելական եկեղեցին ՌԴ-ում ներկայացված է Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմով, որի կենտրոնը գտնվում է Մոսկվայում: Այն ընդգրկում է 40-ից ավելի համայնք, որից 27-ը ՌԴ տարածքում է: Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի անդամ են նաև Ուկրաինայի, Մոլդովայի, Ուզբեկստանի, Լատվիայի, Բելոռուսի հայ առաքելական համայնքները: Հետխորհրդային շրջանում Հայ Առաքելական եկեղեցուն են վերադարձվել հայկական որոշ եկեղեցիներ: Այժմ հայ համայնքներում գործում են 30-ից ավելի եկեղեցիներ, մատուռներ, կառուցում են նորերը: Բացի Մոսկվայում հայկական վեհաշուք եկեղեցու կառուցումից՝ կառուցվում են նաև ոչ ավանդական եկեղեցիներ, բայց ներկայում՝ հայաշատ ՌԴ շրջաններում՝ Սիբիրի Օմսկ, Տոմսկ, Կրասնոյարսկ, Նիժնի Նովգորոդ քաղաքներում և այլուր: Ստեղծվել են նաև սերտ կապեր ՌԴ հայ համայնքների և ոչ միայն ռուսական շրջանների, այլև ՀՀ մարզերի միջև: Դրա լավագույն արտահայտությունն է 2000-ական թվականներից սկսած մինչև 2016 թ. ներառյալ սերտ սոցիալ-տնտեսական, հատկապես մշակութային և գիտակրթական կապերը ՀՀ Արմավիրի, Արարատի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Սյունիքի և այլ մարզերի ու փոխազդեցությունները Մոսկվայի, Տվերի, Ստավրոպոլի, Կրասնոդարի, Դոնի Ռոստովի, Սիբիրի Օմսկ, Տոմսկի, Նիժնի Նովգորոդի, Օրինբուրգի, Նովոսիբիրսկի և այլ հայկական համայնքների հետ[552]: Անաղարտ այս կոչերն ու փոխհարաբերությունները նպաստում են նաև միջպետական հարաբերությունների հետագա զարգացմանը, ՌԴ-ն՝ իբրև ՀՀ-ի ռազմական գործընկեր: Այդ կապերը էլ ավելի են սերտանում օրեցօր:

Հայաստանի անկախացումից հետո, երբ հանրապետությունից կատարվող լայնածավալ արտագաղթի պատճառով բազմամարդ դարձան հատկապես Ռուսաստանի հայկական գաղթավայրերը, և ստեղծվեցին նորերը, կարևորագույն նշանակություն ունեցավ նրանցում հայ մշակույթի օրերի կազմակերպումը: Օրինակ, 1993 թ. հունիսին Աստրախանում կազմակերպվեցին հայկական մշակույթի օրեր, որին մասնակցեցին Ռուսաստանի հայկական տարբեր հա-

[552] Տե՛ս նույն տեղում, էջ 163:

մայնքների ներկայացուցիչներ, քաղաքական և տնտեսական ղեկավարներ, գիտության և արվեստի գործիչներ:

Հայ արվեստի գործիչներ պարբերաբար այցելում էին Ռուսաստանի զանազան նահանգներ, շրջաններ ու քաղաքներ: Հայկական մշակույթի օրերին, որպես կանոն, տեղի հեռուստատեսությամբ տրվում էին հաղորդումներ հայ արվեստի, նրա գործիչների ստեղծագործությունների, տվյալ հայկական համայնքի մասին: Հայ երաժշտության մասնագետները հաղորդումներով հանդես են գալիս ռուս լսարանի առջև: Նման միջոցառումները մեծապես նպաստում էին հայ համայնքների համախմբմանը, հայրենիքի հետ նրանց կապերի ամրապնդմանը[553]:

Կրթամշակութային երկարատև նիրհից արթնանում էր ներքին սփյուռքի հայությունը՝ ձեռնամուխ լինելով ազգապահպանման գործին: Այդ տեսակետից կարևոր աշխատանք էր ծավալում Սանկտ-Պետերբուրգի «Հայկական տուն» ընկերությունը, որի հիմնական նպատակն էր քաղաքի զանազան հայկական կազմակերպությունների, ինչպես նաև անհատ գործիչների միջև հոգևոր մշակութային և գործարար կապերի ամրապնդումը: 1993 թ. Պետերբուրգի իշխանությունները տեղի հայկական համայնքին վերադարձրին հայոց եկեղեցին, սկսեց լույս տեսնել «Հավատամք» ամսաթերթը: Քաղաքի հայկական դպրոցները Հայաստանից ստանում էին անհրաժեշտ դասագրքեր ու դպրոցական պիտույքներ: Եռանդուն ազգապահպանման գործունեություն էր ծավալել Աստրախանի հայկական համայնքը, որը սերտորեն համագործակցում էր Հայաստանի հետ, կազմակերպում փոխադարձ այցելություններ: Քաղաքի հայությանը ազգային լեզուն վերադարձնելու առաջին քայլերն էին արվում: Ազգանվեր գործունեություն էր սկսվել Դնեպրոպետրովսկի հայկական համայնքում, որի ակտիվ միջնորդությամբ քաղաքի որոշ դպրոցներում, ուր մեծ էր հայ աշակերտների թիվը, մտցվել էր հայոց լեզու և գրականություն առարկան[554]:

Հայրենիքին աջակցելն իրենց կարևոր հայրենասիրական պարտքն էին համարում ներքին սփյուռքի հայ համայնքները: Այստեղ իր ուրույն տեղն ունի Ռուսաստանը: Դա այն երկիրն է, որն անարգել ապաստան տվեց ինչպես ազգամիջյան կռիվներից, այնպես էլ երկրաշարժից հետո անօթևան մնացած հարյուր հազարավոր մարդկանց:

Հայաստան-Սփյոռք կապերի ամրապնդման և հայապահպանման համար կարևոր նշանակություն ունեցան համատեղ համաժո-

---

[553] Տե՛ս «Հայոց պատմություն», խմբագիր Հ. Սիմոնյան, ֆուհական դասագիրք, Ե. 2012, էջ 807, 810:

[554] Նույն տեղում, էջ 811:

ղովները, համահայկական մարզական խաղերը, «Մեկ ազգ, մեկ մշակույթ» փառատոնները, համահայկական երիտասարդական համաժողովները և զանգվածային այլ միջոցառումներ, որոնք մեծապես նպաստում էին ազգային միասնության ամրապնդմանը: Հայաստան-Սփյուռք կապերը տարեցտարի դառնում են առավել համակարգված, դինամիկ ու հեռանկարային:

Անշուշտ, ՌԴ հայ համայնքների առկայությունը, նրանց ակտիվ աշխատանքը, հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական տարբեր ոլորտներում սերտ կապերը ՀՀ մարզերի, Ռուսաստանի տարբեր հաստատությունների, քաղաքական և հասարակական շրջանների հետ նպաստում են ՀՀ և ՌԴ միջպետական հարաբերությունների զարգացմանը և ամրապնդմանը: Դրա լավագույն վկայություններն են ՀՀ և ՌԴ միջև կնքված բազմաթիվ պայմանագրերը, համաձայնագրերն ու համատեղ անցկացվող միջոցառումները:

Հայաստանի Հանրապետության անկախացումից անմիջապես հետո ՌԴ-ն ոչ միայն ճանաչեց ՀՀ անկախությունը, այլ նաև հաստատեց սերտ բարիդրացիական հարաբերություններ: Դեռևս 1991 թ. դեկտեմբերի 3-ին ՌԴ և ՀՀ միջև ստորագրվեց համաձայնագիր առևտրատնտեսական համագործակցության սկզբունքների մասին[555], իսկ դեկտեմբերի 29-ին Մոսկվայում ՌԴ և ՀՀ միջև ստորագրվեց «Համագործակցության, բարեկամության և փոխադարձ անվտանգության» պայմանագիր, որով դրվեց երկկողմ քաղաքական նոր հարաբերությունների սկիզբը:

Հայաստանի համար ռազմավարական տեղ են գրավում ուղղակի հարաբերությունները Ռուսաստանի Դաշնության հետ: 1995 թ. մարտի 19-ին ՀՀ և ՌԴ միջև կնքվեց պայմանագիր, իրավական հիմքի վրա դրվեց Հայաստանում ռուսական ռազմական ուժերի տեղակայման հարցը, որը կարևոր նշանակություն ունի հանրապետության անվտանգությունն ապահովելու համար:

Երկու երկրների հարաբերությունները որակական նոր փուլ թևակոխեցին Հայաստանի և Ռուսաստանի միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին 1997 թ. օգոստոսի 29-ին կնքված պայմանագրով:

ՌԴ-ից ՀՀ առաքվում են բնական գազ, ՀԱԷԿ-ի միջուկային վառելիք, նաև բնական ալմաստներ, որոնց մշակումը ՀՀ տնտեսության կարևոր ճյուղերից է: 2016 թ. ՀՀ-ում գործում է ռուսական կապիտալի մասնաբաժնով 1300 ընկերություն: Հայաստանի տնտեսության մեջ ՌԴ-ի ներդրումները մինչև 2011 թ. կազմել է 2,5 մլրդ դոլար: Ռուսաստանը շարունակում է մնալ ՀՀ արտաքին առևտրատընտեսական հիմնական գործընկերը: 2016 թ. տվյալներով ապրան-

[555] ՀՀ ԱԳՆ, ընթացիկ արխիվ, ԱՊՀ վարչություն, Ե., 2005, էջ 2:

քաշրջանառության ծավալը կազմել է ավելի քան 1 մլրդ 250 հազ. դոլար: ՀՀ տնտեսության կապիտալ ներդրումների 50 %-ից ավելին ռուսական ներդրումներն են:

ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդևը 2010 թ. օգոստոսի 19-20-ը երկրորդ պաշտոնական այցով եղավ ՀՀ-ում: Ստորագրվեց նոր պայմանագիր ՀՀ-ում գտնվող ռազմակայանի տեղակայման ժամկետը երկարացնելու, ինչպես նաև սոցիալ-տնտեսական ոլորտում համագործակցության վերաբերյալ:

Այսպիսով՝ այսօր էլ ՌԴ-ի հայ համայնքների ակտիվ աշխատանքի շնորհիվ շարունակում են զարգանալ հայ-ռուսական միջպետական հարաբերությունները՝ ընդգրկելով հասարակական և քաղաքական կյանքի տարբեր ոլորտներ:

Эдик Минасян (РА), *Роль армянской диаспоры РФ в отношениях между РА и РФ*.

Edik Minasyan (RA), *The role of the RF Armenian Diaspora in RA-RF Relations*.